

Խմբագրական

ԻՍՐԱՅԷԼ - ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔ ԲԱՆՈՒՄԻ ԸՆԴԱՎՅՆՄԱՆ ՀԱԻՄՆԱԿԱՆ ՀԵՏԵԻՄՆՔՆԵՐ

Իսրայել-Դիմադրության առանցք բախումներու աշխարհագրությունը կրնայ ընդլայնիլ, յատկապես եթե Իրանի պատասխան հարուածը Իսրայելի կողմէ Զանիէի Թեհրանի մէջ սպանութեան որպէս պատասխան, ապա նաեւ Լիբանանի արուարձանին մէջ Դիմադրության երկրորդ դեմքի սպանութեան որպէս արդիւնք, ըլլայ մեծ ու ցաւցնող հակահարուած:

Պատերազմի աշխարհագրական տարածքի ընդլայնման պարագային բնականաբար պիտի ազդուին նաեւ Միջինարեւելեան երկիրները, որոնք վերջին տարիներուն, այսպէս կոչուած «արաբական գարուն»-ի բերած սեւ օրերուն հետեւանքով տնտեսական բաւական մեծ վնասներ կրեցին արդէն:

Պատերազմի ընդլայնումի պարագային ցամաքային, օդային եւ ծովային արդէն որոշ չափով ամլացած ճամբաները (եթէ նկատի ունենանք Լիբանան-Սուրիա-Յորդանան-Թուրքիա-Իրաք ճամբաներու վերջին տարիներու վիճակը եւ անոր հետեւանք տնտեսական վնասները) առաւել եւս կրնան ամլանալ, ինչ որ իր բացասական ազդեցութիւնը կրնայ ունենալ այս շրջանի երկիրներու տնտեսութեան վրայ:

Միւս կողմէ, սակայն, Իսրայել Կազգայի մէջ իր արիւթաթախ ձեռքը կրնայ երկարել այս անգամ դէպի Լիբանան, Սուրիա եւ տարածաշրջանի այլ երկիրներու որոշ շրջաններ, ինչ որ կրնայ սպառել իր կարողութիւնները, եթէ նկատի ունենանք իրանեան նախատեսուող հակահարուածը եւ արաբական երկիրներէ, յատկապէս Սուրիայէն եւ Լիբանանէն հաւանական հակահարուածները:

ԱՄՆ նախագահական ընտրութիւններու սեմին է, ինչ որ կասկածելի կը դարձնէ պատերազմական նոր աշխարհագրութիւններու մէջ ուղղակիօրէն մտնելու հաւանականութիւնը, հակառակ անոր որ ԱՄՆ-ի նաւատորմ մը հասած է արդէն Միջերկրական ծով:

Տարածաշրջանային որեւէ պատերազմի տնտեսական հետեւանքները իր տարողութեամբ եւ բնոյթով կախեալ են այդ պատերազմի աշխարհագրական սահմաններէն, ձեւերէն եւ անոր մասնակից երկիրներէն: Այս պարագային, պատերազմի աշխարհագրական ընդլայնումով բոլոր ջրային ճամբաները եւ առեւտրային երթեւեկութեան ուղիները վտանգի գօտիի մէջ պիտի յայտնուին, ինչ որ կը նշանակէ, թէ միջինարեւելեան առեւտուրը ուղղակիօրէն պիտի ազդուի:

Պատերազմի ընդլայնումով կրնան ազդուիլ նաեւ ինչպէս Ծոցի այնպէս ալ Ծոցի շարք մը երկիրներու մէջ ներդրումային ձեռնարկներ ունեցող արեւմտեան երկիրներ, որովհետեւ կարելի պիտի չըլլայ անկակալել ապրանքի եւ քարիւղի բնականոն հոսք դէպի Արաբական Ծոց, եթէ Իրան յարձակման թիրախ դառնայ, նոյնն ալ դէպի Միջերկրական Ծով, եթէ Սուրիա եւ Լիբանան թիրախ դառնան ամերիկաիսրայելեան ուժերու կողմէ:

Ամեն պարագայի համաշխարհային տնտեսութեան անկումի այս օրերուն, իսրայելեան ոճրային արարքները անհաւանական է որ պատճառ դառնան Իսրայել-Իրան պատերազմի աշխարհագրական տարածքի ընդլայնման, որովհետեւ ակալի պիտի բարդացնեն ոչ թէ միայն միջինարեւելեան երկիրներու, այլեւ նոյնիսկ յարձակող երկրին տնտեսական թաւալգոր անկումը:

Եթէ Իրանի եւ դիմադրութեան շարժումի լոկ հակահարուածի նախապատրաստուելու յայտարարութիւնը բացասաբար անդրադարձաւ Իսրայելի տնտեսութեան եւ հասարակութեան հոգեբանութեան վրայ ընդհանրապէս, պատերազմի ընդլայնումով ոչ միայն անդամալի վնասներ պիտի կրէ այդ երկրին տնտեսութիւնը, այլեւ թափ պիտի առնէ Պաղեստինեան անկախ պետութեան ճանաչման հարցը, ինչ որ յաւելեալ ճնշում պիտի բանեցնէ Իսրայելի վրայ:

Չարուած-հակահարուածի տարողութիւնը իրողութիւններ կրնայ փոխել գետնի վրայ յառաջիկայ օրերուն:

«Գ.»

-Երկուշաբթի, 5 Օգոստոս 2024-ին, Սեւտական Արաբիոյ Մաքքա քաղաքին մէջ տեղի ունեցած իսլամական երկիրներու կրօնական կալուածներու եւ իսլամական հարցերու նախարարներու 9-րդ խորհրդաժողովը իր աւարտին հասաւ:

Սոյն խորհրդաժողովին իր մասնակցութիւնը բերաւ Սուրիոյ կրօնական կալուածներու նախարար դոկտ. Մուհամմետ Ապտալ Սաթթար ալ-Սեյիտ:



Խորհրդաժողովին ընթացքին մասնակիցները շեշտեցին Պաղեստինեան Դատին նկատմամբ իրենց անխախտ կեցուածքը, հաստատելով, որ Պաղեստինի ժողովուրդը պէտք է իր օրինական իրաւունքներուն տիրանայ եւ իր դէմ իրագործուած վայրագութիւններէն եւ ցեղասպանութենէն պաշտպանուի: Մասնակիցները շեշտեցին նաեւ Կազգայի մէջ Պաղեստինի ժողովուրդին դէմ իսրայելեան գրոհին դադրեցման անհրաժեշտութիւնը:

-Սուրիոյ Արտաքին գործոց նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ Սուրիոյ Զանրապետութեան խորին ցաւակցութիւնը յայտնեց Փաքիստանի Իսլամական Զանրապետութեան Լահոր քաղաքին մէջ տեղի ունեցած աղետալի ջրհեղեղի զոհերուն համար:



Նախարարութիւնը ակալեցուց. «Սուրիոյ Զանրապետութիւնը կը ցաւակցի աղետալի ջրհեղեղի զոհերուն ընտանիքներուն, շուտափոյթ ապաքինում կը մաղթ վիրաւորներուն եւ զօրակցութիւն կը յայտնէ Փաքիստանի կառավարութեան այս աղետալի դէպքին առիթով»:

-Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ իրանցի իր պաշտօնակից Ալի Պաքիրիի հետ հեռաձայնային հաղորդակցութեամբ խորհրդակցեցաւ տարածաշրջանի իրավիճակին շուրջ, յատկապէս իսրայելեան ոտընձգութիւններուն շուրջ տարածաշրջանի կարգ մը երկիրներու դէմ, ներառեալ Թեհրանի մէջ Իսրայելի կողմէ պաղեստինեան դիմադրութեան ԶԱՄԱՍ շարժումի դեկավար Իսմայիլ Զէնիէի ահաբեկումը, ինչպէս նաեւ Լիբանանի վրայ տեղի ունեցող գրոհը, որուն հետեւանքով Ֆուլատ Շըքըր նահատակուեցաւ:



Նախարար Մըքտատ վերահաստատեց Սուրիոյ Զանրապետութեան զօրակցութիւնը Իրանին, բարձր գնահատելով իսրայելեան ոտնձգութիւնները դադրեցնելու համար Իրանի տարած աշխատանքը:

-Սուրիոյ կրօնական կալուածներու նախարար դոկտ. Մուհամմետ Ապտալ Սաթթար ալ-Սեյիտ Սեւտական Արաբիոյ իսլամական հարցերու նախարար դոկտ. Ապտալ Լաթիֆ պըն Ապտալ Ազիզ ալ-Շէյխին հետ խորհրդակցեցաւ երկու երկիրներու գործակցութեան եւ կրօնական ոլորտին մէջ յարաբերութեան ամրապնդման շուրջ:



-Չորեքշաբթի, 7 Օգոստոս 2024-ին, լիբանանեան լրատուամիջոցներ յայտարարեցին, որ Իսրայել յարձակում գործեց Մֆետուն արուարձանի ալ-Նատի շրջանին վրայ, թիրախ դարձնելով երկյարկան բնակարան մը, որուն հետեւանքով չորս քաղաքայիններ նահատակուեցան:



Նախորդ օրը Իսրայել հըրթիռակոծած էր նաեւ Լիբանանի հարաւային Ապպա արուարձանի կարգ մը թաղեր, որուն հետեւանքով նահատակ մը եւ վիրաւոր մը արձանագրուած էին:

ԼՇՄԱՐ

ÀÔÊ² ÜàÔÛ° ðÀ î² ä² È° ðÆÛ
ä² ÛÎÈ² î³ ÆÆ îÆð² Î² ÈÀ



Ս. Սահակյան

Պանկլատչի վարչապետ Շեյխ Ջասինայի երկրեն փախուստը Երկուշաբթի, 5 Օգոստոսին, գրաւեց միջազգային լրատու աղբիւրներու առաջին տեղը. նախընթաց օրերէն շատ անելի լայն ու մանրամասն տեղեկութիւններ հաղորդուեցան եւ



Շեյխ Ջասինա

բազում մեկնաբանութիւններ իրարու հետ մրցումի ելան յեղաշրջական շարժումին մասին, որուն շարժիչ ուժը ՈՒՄԱՆՈՂՈՒԹԻՒՆՆ ԷՐ:

Այս սիւնակին մէջ պիտի չմըտնենք եղածին բազմաթիւ ծայրերուն մէջ, ո՛չ ալ պիտի պեղենք ստեղծուած վիճակին իրական կամ են-

ծակցներ (սման վիճակներու ակաւատես եղած ենք նորանկախ բազմաթիւ երկիրներու մէջ, Ափրիկէի եւ այլ ցամաքամասերու վրայ): Կ'ուզենք լուսարձակի տակ բերել քանի մը գլխաւոր գիծ, որոնք ուսանելի են նա՛եւ հայերու համար: Պատճառը այն է, որ Երեւանի արեւմտեան՝ Մալաթիա-Սեբաստիա շրջանը ծաւալուած է Պանկլատչի անունով:

Ա. Զրաժարեալ եւ Զնդկաստան ապաստանած վարչապետուհին, 76 տարեկան, պատմական դեմք է. ան անելի քան 20 տարի (երկու փուլով՝ 1996-2001 եւ 2009-2024) վարած է երկրին ղեկը: Դուստրն է Պանկլատչի հիմնադիր եւ առաջին նախագահ Շեյխ Մաճիպուր Ռահմանի: Երկարատեն սիրուած առաջնորդ էր. անոր կը վերագրուի Պանկլատչի ապրած որոշակի բարգաւաճումը (նաեւ այլ դրական բարեփոխումներ ունի): Վերջնորում էր այս տարեկիցքին: Կը վայելէր բանակին զօրակցութիւնը: Անոր դէմ բողոքի շարժումներ արձանագրուած էին անցեալին, սակայն ան յաջողած էր մնալ ղեկին: Վերջին ընտրութիւններու նախօրեակին, անցեալ տարեվերջին, բանտախուցերը լեցուած էին շուրջ 25 հազար ընդդիմադիրներով...

Բ. Դժգոհութեան եւ բողոքի նորագոյն շարժումը սկիզբ առաւ Յունիսին, ուսանողական շարքերէ: Սկզբնապէս, կար այն վիճակը, թէ

սակայն ո՛չ՝ բանակը (սկզբնական փուլին), որ իշխանութեան կողմէ գործի հանուեցաւ ճնշելու ցոյցերը: Բանի մը օրուան մէջ, վիճակը դարձաւ անհակակշռելի: Մայրաքաղաք Տաքայէն մինչեւ այլ մեծ ու փոքր քաղաքներ վարակուեցան բողոքողներու բազմութիւններով: Որոշ օրեր, ցուցարարներու թիւը գնահատուեցաւ միլիոնով: Ուսանողներուն սկսած շարժումը գտաւ լայն ժողովրդականութիւն, որովհետեւ մարդիկ դժգոհ էին տնտեսական եւ ընկերային գետիններու վրայ աղետալի նահանջներէն (սղաճ, սուղ դրամանիշներու պահեստի նահանջ եւ այլն):



Կիները մասնակից են

Գ. Իշխանութեան ի գործ դրած բիրտ ուժը ունեցաւ ահաւոր հետեւանքներ: Ըստ հաւաստի տեղեկութիւններու, վերջին երկու շաբաթներուն, արձանագրուած են առնուազն 300 զոհ, որոնց շարքին՝ մանուկներ, որոնք սպանուած են իրենց բնակարաններուն մէջ: Կ'ըսուի, թէ զոհերուն թիւը կ'անցնի հազարը...

Դ. Բողոքաւորներուն միակ պահանջն էր՝ ՇԵՅԱ ՋԱՍԻՆԱ ՊԵՏԷ Ե ԶՐԱՃԱՐԻ: Զիմա արդէն կը խօսին անոր երկիր վերադարձի եւ դատարան ղրկուելու պահանջներուն մասին: Կ'արժէ կրկնել, որ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ անգամ մը եւս փաստեց, որ երիտասարդութիւնը կրնայ լեռներ շարժել: Նախընթացները արձանագրուած են Եւրոպայի մէջ, Չինաստանի մէջ (Թիան Ան Մէն), հարաւ-ամերիկեան երկիրներու մէջ եւ այլուր:

Ե. Իբրեւ ուսանողական շարժում սկսած ալիքը, ինչպէս նշեցինք, վերջին օրերուն շահեցաւ քաղաքական ընդդիմադիրներու զօրակցութիւնը (թէ ի՞նչ ծայրեր կան հոն՝ չենք ուզեր արծարծել): Նախկին բանակայիններ ալ միացան ընդդիմադիրներուն: Ի վերջոյ, բացայայտ դարձաւ, որ բանակն ալ թողլըած է վարչապետը, որուն դիմաց բաց մնացած էր մէկ դուռ. հրաժարիլ եւ ապաստանիլ Զնդկաստան:

2. Վարչապետին իրողական պաշտօնակազմին յայտարարեց բանակի հրամանատարը՝ Զօր. Ուաքեր ու-Չաման: Ան չեղեալ հռչակեց ստիպողական վիճակը, խաղաղութեան եւ համերաշխութեան կոչ ուղղեց եւ ըսաւ, թէ կազմուած է ԱՌԺԱՄԵԾ ՓՈՒԿԱՆՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ մը: Խզուած հաղորդամիջոցները (համացանց եւ այլ) վերականգնեցան, խռովութիւններու ալիքը մեծ մասամբ մարեցաւ:

Վարչապետին հրաժարականին՝ բանակին կողմէ հրապարակուած գրաւեց միջազգային շրջանակներու ուշադրութիւնը եւ փաստագրեց, որ բանակը միացած է շարժումին, անընդունելի գտած է արիւնահեղութիւնը եւ բռնաճնշումները (ցուցարարներու դէմ գործածուած էին արցունքաբեր ռումբեր, ձգախեղձ փամփուշտներ եւ այլ կարծր զենքեր...): Մեր ուշադրութիւնը գրաւեց պանկլատչի լրագրող մեկնաբանի մը բացատրութիւնը, որ սփռուեցաւ ֆրանսական պատկերասփիւռ կայանէ մը: Զիրընկալ հաղորդավարին այն հարցումին՝ թէ ինչո՞ւ բանակային մը կ'ընէ այս յայտարարութիւնը, մեկնաբանը պատասխանեց կարծ ու կտրուկ. «ՎԱՐՉԱՊԵՏԸ ԶԱՅՆ ԱՌԺԱՄԵՇ ԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՐ ԿԱՌՈՅՆԵՐԸ, ՍԿՍԵԼՈՎ ԻՐԱԿԱՆԱՆԵՆ ՈՒ ԶԱՍՆԵԼՈՎ ԱՅՆ ՈՒՐՈՒՄՆԵՐ. ԿԸ ՄՆԱՐ ՄԻԱՅՆ... ԲԱՆԱԿԸ»:

Վաղը, օրերն ու շաբաթները ցոյց պիտի տան, թէ բողոքի այս շարժումը ցարդ նշուածներէն այլ՝ ի՞նչ խորքեր ու արմատներ ունէր (մէկ մասը յստակ է, սակայն, ինչպէս ըսինք, չենք ուզեր մտնել մանրամասնութիւններու մէջ), որո՞նք կը կանգնին - դուրսէն - անոր ետին: Արդեօք անկախ մէկ նոր օղակն է այն «զուլաւոր յեղափոխութիւն»ներուն, որոնք առատօրէն կ'ընծայուին հոս-հոն:

Ժամանակը ցոյց պիտի տայ նաեւ, թէ ժամանակաւոր ու փոխանցման կառավարութիւնը որո՞նք ենթակայ պիտի ըլլայ, նկատի ունենալով, որ բանակը միշտ ալ տիրական դեր խաղացած է սման շարժումներու զսպման մէջ: (Կը յիշէ՞ք Թուրքիոյ կամ այլ երկիրներու բանակի դերակատարութիւնները...): Յաջորդ իշխանութիւն(ներ)ը պիտի յաջողի՞ն բարեշրջման դռները բանալ եւ դարմանել կուտակուած տագնապները: Ասիոյ հարաւարեւելեան (ո՛չ միայն) երկիրներու մէջ նախընթացները ուրիշ բան մտածել կու տան. նկատի ունինք Նոյնիքն Զնդկաստանի, Փաքիստանի, մինչեւ իսկ Միանմարի եւ այլ երկիրներու նախընթացները:

Անշուշտ կը մնայ այլ կարեւոր հարցում մը, որ այս հարցով մեր հետաքրքրութեան կիզակետն է. Զայաստանի մէջ արդեօք ուսանող կա՞յ, որ շահի բանակին եւ ազգապահպան-հայրենապաշտպան ընդդիմադիրներուն աջակցութիւնը, դառնայ ՄԻԱՅՆՈՂ ԳՈՐԾՕՆ, մանաւանդ, որ մեր հայրենիքին զխոն կախուած վտանգները շա՛տ անելի օրհասական են:

...Ուշագրաւ էր, որ նահանջի յորդորներու ու խաբէութեան տոպրակը կռնակը առած է Բերքաբեր գացած վարչապետը «Դուխով» արձանագրութեամբ գլխարկը չի գործածեր երկարատեն ի վեր:



Յուցարարներ կը տօնեն

թաղրեալ արմատները, որոնք կ'երկարին մինչեւ 1971, անգամ մ մինչեւ 1947, երբ ծնունդ առաւ Պանկլատչի անունով (իբրեւ իսլամական ճանցուած) երկիրը, նախ Փաքիստանի հետ անջատուելով Զնդկաստանէն, ապա դառնալով անկախ եւ ինքնիշխան պետութիւն: (Մանրամասնութիւն մըն է, օրինակի համար, բրիտանական կայսրութենէն անկախացած Զնդկաստանէն այս անջատուողներուն... Անգլիոյ զօրակցութիւնը): Երկար է պատմութիւնը նաեւ ներքին այն հակամարտութիւններուն ու մրցակցութիւններուն, որոնք որոշ հանգրուաններու իրարու դէմ հանած են նախկին գոր-

այս շարժումն ալ անպտուղ պիտի մնայ: Յետոյ, դէպքերը ստացան այլ ընթացք: Շարժումին անմիջական դրդապատճառը՝ խտրական օրէնքի մը շուրջ ստեղծուած՝ մուկատուի խաղն էր. դրութիւնը պետական պաշտօններու կը կոչէր ընտրելներու դասակարգ մը: Ըստ վիճակագրութիւններու, 170 միլիոն բնակիչ ունեցող երկրին մէջ, շուրջ 32 միլիոն անգործ ուսանող-երիտասարդ կայ: Յունիսին ծայր առած բողոքի ալիքը կտրուկ բարձրացում արձանագրեց Յուլիսի վերջին 10 օրերէն ասդին: Ուսանողները իրենց կողքին շահեցան ընդդիմադիր կուսակցութիւններու զօրակցութիւնը,

ՀԱՄԱՍՏԵՂ ԵՒ ՎԱՏԻ-ՀԱՅԿ. ԽԱՐԲԵՐՈՒՄԻ ԵՐԿՐՈՒ ԳՐԱԳԵՏՆԵՐ ԴԵՄ-ՅԱՆԴԻՄԱՆ



Լեոն Ծառոյեան

Եթէ կը սիրէք գիր-գրականութիւնը ու կոկիկ գրողարան մըն ալ կրցէք եք կազմել ձեր բնակարանին մէկ անկիւնը, ուրեմն կրնամ ենթադրել, թէ վերի երկու անունները անծանօթ չեն ձեզի:

Համաստեղ (Համբարձում Կելենեան) եւ Վահէ-Հայկ (Տինճեան):

Դիւրաւ կրնամ բազմաթիւ նմանութիւններ գտնել ինծի սիրելի այս երկու գրողներուն միջեւ:

Ամեն բանէ առաջ՝ երկուքն ալ խարբերողի են: Համաստեղ՝ խարբերողի Փերչենճ գիւղէն, իսկ Վահէ-Հայկ՝ ուղղակի խարբերող քաղաքէն:

Սերնդակից կը սեպուին իրարու: Համաստեղ ծնած է 1895-ին, իսկ Վահէ-Հայկ՝ մէկ տարի ետք, 1896-ին:

Երկուքն ալ իրենց տոհմիկ կրթութիւնը ստացել են շրջանի հայկական դպրոցներէն: Համաստեղ՝ Մեգիրէի (Նահանգին կուսակալանիստ քաղաքը) Կեդրոնական վարժարանէն, իսկ Վահէ-Հայկ՝ խարբերողի Եփրատ գոլէճէն:

Երկուքն ալ կը նկատուին ամերիկահայ գրականութեան Ա. սերունդի ամենէն երեւելի քանի մը դէմքերէն: Իրենցմով է որ սկիզբ կ'առնէ ամերիկահայ գրականութիւնը՝ անցեալ դարու քսանական թուականներուն:

Երկուքն ալ անձանձրոյթ մշակած են **գիւղագրութեան սեռը** մեր արձակ գրականութեան մէջ: Սիրուն ու տպաւորիչ պատմութեան մասին:



Վահէ-Հայկ

մեզի ներկայացուցած են կորսուած Արեւմտահայաստանի գիւղն ու գաւառական կեանքը՝ իր գունագեղ ու պարզունակ ամօրեայով, հայ համեստ գիւղացին՝ իր աշխատանքի քրտինքին մէջ, իր տոհմիկ սովորութիւններուն ու բարքերուն հաւատարիմ, իր հողին ու մայրենի բարբառին կառչած: Այս տիպի գրականութիւնը, կրնանք ըսել, տեսակ մը երկարած գոյնը եղած է Խրիմեանով, Սրուանձտեանցով, Թլկատիսցիով կամ Մշոյ Գեղամով (Տեր Կարապետեան) սկսած ու ծաղկած գաւառիկ գրականութեան:

Թէ՛ Համաստեղ եւ թէ՛ Վահէ-Հայկ, տասնամեակներ շարունակ Ամերիկա ապրելով հանդերձ՝ չեն կրցած փրօթիլ իրենց ծննդավայրին վառ յիշատակներէն, դիւթանքէն: Կարօտը տանջած է զիրենք: Անոնք, երկուքն ալ, կորսուած գաւառը կրած են իրենց արեան ու ողնածուծին մէջ: Եւ ուստի, սեւ ձեռքերու կողմէ քարտեզէ ջնջուած այդ հայկական գաւառը ուզած են վերապրեցնել գոնէ գրականութեան ճամբով:

Ի՞նչ լաւ ըրած են, որ փրկած են այդ գաւառին պատկերները ու գայն յանձնած յաւերժութեան:

Համաստեղ ու Վահէ-Հայկ այսքան շատ տուեալներով իրարու նմանելով հանդերձ, իրարմէ հեռու եղած են իրենց գաղափարական հակումներով. Համաստեղ դաշնակցական էր, մինչ Վահէ-Հայկ՝ ռամկավար:

Գիտեմ, որ մեր օրերուն, այս վերջին տուեալը կորսնցուցած է այլեւս իր երբեմնի «շահեկանութիւն»-ը: Հայ գրականութեան սպասարկուները պիտի արժեւորուին կամ մեծարուին միմիայն իրենց վաստակին ու բերքին որակի՞ն համեմատ: Ու պիտի ապրին անոնք մեր դասագիրքերուն, մեր մշակութային ապրումներուն եւ խոհերուն մէջ՝ անխտրակա՞ն մերձեցումով:

Սակայն տասնամեակներ առաջ, Համաստեղի ու Վահէ-Հայկի օրերուն, խտրականութիւնը բոյն դրած էր մեր գրականութեան մէջ եւս: Կար Սովետական Հայաստանը՝ արտասահմանի իր ջերմ համակիրներով, ու կար անոր հակադրուած շրջանակը: Սփիւռքահայ գրողներն ալ, իրենց կարգին, կամայ-ակամայ, մաս պիտի կազմէին հակադիր շրջանակներէն մէկուն կամ միւսին: Գրականութիւնն ալ, ուրեմն, երկփեղկուած էր: Գրական պարբերաթերթերն անգամ ունէին «գոյն» ու կազմած էին ճակատներ: Վահէ-Վահեանի Պէրյուրի «Անի»-ն հաշտ աչքով չէր դիտեր որացի Հայկի «Նայիրի» ամսագիրը (Ա. Ծառուկեան): Պոսթընի «Հայրենիք» ամսագիրն ու Նիւ Եորքի «Նոր գիր»-ը (Բ. Նուրիկեան) բարեկամներ չէին իրարու: Փարիզի «Չուարթնոն»-ը (Յ. Բալուեան) կռնակ դարձուցած էր Նոյն քաղաքին մէջ հրատարակուող ձախակողմեան «Լուսադիւր»-ին: Հինէն ժառանգուած այս գիծը գրեթէ անշեղօրէն կը շարունակուէր Պէրյուրի «Շիրակ»-ին ու «Բագին»-ին կողմէ ալ...:

Այս բոլորը յիշեցի ու գրեցի, որովհետեւ պատահական ընթերցում մը գրգիռ յառաջացուց իմ մէջ:

Գրողարանիս մէկ անկիւնէն գտայ Վահէ-Հայկի «Լուսաւոր Դէմքեր Մեր Օրերուն Վրայ» ծաւալուն հատորը, որ տպուած է Պէրյուրի, ճիշդ կէս դար առաջ՝ 1972-ին (տպարան Տօնիկեան): Հեղինակին կարեւոր գործերէն մին է այս՝ իր «Հայրենի Ծխան»-ներու հինգ հատորանոց շարքին ու «Խարբերող եւ Անոր Ոսկեղէն Դաշտը» կողողային պատմագիրքին քովն ի վեր: Շուրջ 400 էջերու երկայնքին, Վահէ-Հայկ այստեղ կը գծէ դիմաստուերները հայ գրականութեան կամ մշակոյթի երեսունի չափ դէմքերու, արձանագրելով

իր արժեւորումները անոնց մասին, ժամանակակիցներու պարագային՝ ոգեկոչելով յուշեր եւ յիշատակներ ու պատմելով անմոռանալի դրուագներ: Ի մի բան՝ հաճոյքով կարդացուող շահեկան գիրք մը:

Հոն տողանցող դէմքերու շարքին է նաեւ Համաստեղ:

Չիս կը հետաքրքրէր Վահէ-Հայկի կարծիքը իր հայրենակից գրէջորք մասին: Նկատի ունենալով իրենց ապրած ժամանակաշրջանի գաղափարական հակադրութիւններն ու զգայնութիւնները, շահեկան պիտի ըլլար իմանալ, թէ ի՞նչ կը մտածէր ռամկավար գրագետ մը դաշնակցական գրողի մը մասին...: Արուեստական պատկերները որքանո՞վ կ'արտօնէին, որ գրող մը հրապարակաւ դրականօրէն արտայայտուի դիմացի խրամատէն այլ գրողի մը մասին:

Վահէ-Հայկ կ'արտայայտուի գնահատանքով, գովեստով: Ըստ իրեն՝ կարճ պատմութեան դաշտին վրայ «Համաստեղի թէքնիքը հիմնալի է: Վատահաբար կարելի է հաստատել, թէ ան գաւառաշունչ պատմութեան, գեղջուկ դիմագիծեր եւ հոգեբանութիւն ստեղծագործելու մեծ վարպետ մըն է եւ այդ կալուածներուն մէջ կը մնայ քանի մը վաւերական դէմքերու շարքին»:

«Գիւղը» եւ «Անձրեւ» գոյգ հատորներուն կողքին՝ Վահէ-Հայկ չի ծածկէր իր համարումը Համաստեղի «Բաջն Նագար» հատորին նկատմամբ ալ:

– Երբ մէկ պարբերութիւն սկսիք կարդալ, ա՛լ չէք կրնար ձգել: Այնքան հարագատ, այնքան պարզ եւ այնքան ապրող ու շնչող էակներ ձեզի կու գան, կը խօսին, կը կռուին, կը գործեն, կ'ապրին կամ կը մեռնին՝ ճիշդ այնպէս ինչպէս դուք կը տեսնէիք մեր կեանքին մէջ, ամէն օր եւ ամէն ժամ, – կը հաւատիացնէ ան:

Տարբեր է սակայն Վահէ-Հայկի կարծիքը Համաստեղի «Սպիտակ ձիւտը» երկհատոր վեպին մասին: Չ'ուրանար որ անկաւ ունի կարգ մը գեղեցիկ ու գրաւիչ պատկերներ կամ անանձին դրուագներ, բայց ամբողջութիւնը «դժբախտաբար, անյաջող պէտք է նկատել»: Ըստ իրեն, «վեպին մշակումը յառաջ վարելու ատեն անհկա կը կորսնցնէ իր շիտակ ուղին, կ'իյնայ մութ բաւիղներու մէջ եւ խորպպէս կը վիրաւորէ վեպին ամբողջութիւնը: ...Ընթերցողը կը կորսուի մացառներու մէջ ինկած ճամբորդի մը պէս»:

Այսքանը՝ զուտ գրականութեան մասին:

Բայց Վահէ-Հայկ ունի այլ դժգոհութիւն մըն ալ Համաստեղէն ու գայն չի ծածկէր:

– Հայաստանի շքեղ իրականութեան եւ անոր հոյակապ մշակոյթին վերաբերմամբ Համաստեղի կրաւորական դիրքը կամ լռութիւնը կը մնայ մեկնութեան կարօտ:

Չեմ հաւատար թէ քաղաքական որոշ նախապաշարումներ զինք կաշկանդած ըլլան կամ անոր շրթունքները փակեն: Գիտեմ թէ արդէն անհկա ի բնէ լռակեաց է, զգուշաւոր եւ ետեւի սեղաններուն վրայ ինքզինքը մոռցող: Վահէ-Հայկ կը յիշեցնէ որ երբ ինք Հայաստան այցելեց (խօսքը մի՛շտ Խորի. Հայաստանի մասին է), գրչի շատ ընկերներ ջերմօրէն հետաքրքրուեցան Վահեանի տեսողով, հարցումներ ուղղեցին անոր մասին: Ու ինք ալ՝ շանաց գոհացում տալ անոնց հետաքրքրութեան: Յետոյ կը շարունակէ.

– Վերապրող որեւէ հայ գրողի համար, որ հին երկրէն եկաւ եւ երկու ժամանակներու տարբերութիւնը գիտէ, կարելի չէ, որ հետաքրքրութեան մէջ դանդաղի եւ իր ձեռքերը չէրկարէ հայրենի աշխարհին մէջ հայուն տուելը շինելու փառքին կանչուած անձերուն, այսինքն՝ կերտողներուն, կառուցանողներուն, գրողներուն, երգողներուն, խօսողներուն, քանդակողներուն, քերթողներուն, փնտռողներուն եւ հայեցողներուն, բոլորին եւ ամենո՛ւն:

Սիրուած եւ փնտռուած գրագետ մը անկարելի է որ լուռ մնայ եւ ճղճիմ հաշիւներու մէջ բանտարկուի: Համաստեղ անտարակոյս վեր է ատկէ:

Վահէ-Հայկի դժգոհութեան տուն տուող պատճառը, ուրեմն, յստակ է. Համաստեղի «կրաւորական դիրքը»՝ Խորի. Հայաստանի նկատմամբ:

Հիմա ալ գրողարանես վար կ'առնեմ Համաստեղի նամականիի հատորը, որ «Մուղնի» հրատարակչութեան կողմէ տպուած էր Երեւան (հրատարակչութիւն՝ Կարպիս Լ. Նագարեան հիմնադրամի), 2003-ին, բանասեր Մարգարիտ Խաչատրեանի աշխատասիրութեամբ: Հոս կը գտնեմ Համաստեղի կողմէ Վահէ-Հայկին ուղղեալ եօթը նամակ:

Անոնց մէջ գիս առաւելաբար շահագրգռողը 1947 Օգոստոսին գրուած նամակն է: Հոս, Համաստեղ շնորհակալութիւն կը յայտնէ իր խօսակիցին՝ անոր «Հայրենի Ծխան»-ին Գ. հատորին ստացման առթիւ: Կը յիշեցնէ միաժամանակ, թէ Պոսթընի «Հայրենիք» օրաթերթի խմբագրութիւնը եւս ստացել է Նորատիպ գիրքը, եւ թէ խմբագրութեան անդամներէն տոքթ. Արմենակ Բարսեղեանը ըսած է իրեն՝ որ մտադրած է գրախօսական մը գրել այդ մասին: Համաստեղ իր նամակը կը շարունակէ սա՛յեւս.

– Կը տեսնէք, որ կուսակցական ոչ մէկ հաշիւ կայ «Հայրենիք»-ին մէջ՝ երբ հարցը մանաւանդ գեղեցիկ գրականութեան եւ առհասարակ գրականութեան մասին է: Բարեբախտաբար մերիւններուն մէջ այդ գիծը միշտ ալ ուղիղ եղած է. չփոթել՝ գրական ու գեղարուեստականը կուսակցական-

ԳՐՈՂՆ ՈՒ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂԸ



Գեորգ Պետիկեան

Չեմ գիտեր ուրկէ՞ սկսիմ: Բայց ըսեմ...: Խօսքս հաստատապէս հայ գրողի եւ հայ ընթերցողի մասին է: Գրող, որուն շրջագիծէն ներս կ'իյնան յօդուածագիրն ու բանաստեղծը, արձակագիրն ու սինակագիրը, հրապարակագիրն ու խմբագիրը եւ միւս բոլոր գրիչները: Այլ խօսքով, հայ գիրի եւ գրականութեան ու նաեւ հայ մամուլի արօտավայրէն ներս բոլոր վարուցան ընող, քրտինք թափող խոնարհի հերոսները: Անկասկած, երկու անբաժան զուգահեռներ: Մէկը-միւսը ամբողջացնող: Առանց առաջինին, երկրորդը գոյութիւն չէր կրնար ունենալ, իսկ առանց երկրորդին՝ առաջինը անճանաչ պիտի մնար ու դառնար:



Գրողին էջերը, անոր գրած տողերը անխմաստ պիտի ըլլային, եթէ ընթերցող գոյութիւն չ'ունենար: Ու ամէն գրող, երբ կը հանդիպի ընթերցողին եւ անոր հանրութեան, տարբեր զգացումներով կը լեցուին իր միտքն ու հոգին:

Ճիշդ է որ մարդիկ զանազան պատճառներով դժուար կը կարդան եւ կամ չեն կարդար: Բայց եւ այնպէս տակաւին... փառք Աստուծոյ... կան, կը գտնուին մարդիկ, ընթերցասէրներ, որոնք մօտէն կամ հեռուէն կը հետեւին գրողի գրիչին, կ'ընթերցեն անոր էջերը, նոյնիսկ կը քաջալերեն եւ կամ կը քննադատեն անոր տողերով հիւսուած գաղափարները:

Արդ, յարգանքի եւ գուրգուրանքի արժանի են երկուքն ալ... թէ՛ գրողը եւ թէ՛ ընթերցողը: Հաւասարապէս:

Որովհետեւ գրողը հայ գիրին ծառայող գրիչով, ուրիշ մէկը չէ, եթէ ոչ իր յղացման նորութեամբ եւ նոր բութեամբ ընթերցողին մտքին առջեւ մտածելու եւ խոկալու առիթ տուողը, վարակիչ խանդավառութիւն եւ գօտեպնդիչ երեւոյթ ստեղծող: Իր կարգին, ընթերցողն ալ գրողին ճամբայ կը հարթէ իր գուրգուրանքով ու յարգանքով ու գրողը միշտ երջանիկ կը զգայ անոր ներկայութեան: Ուրեմն՝ ընթերցողը նաեւ որոշ ներշնչում առաքող մըն է գրողին:

Որքան շատ ընթերցող ըլլայ, որքան ընթերցողներուն թիւը մեծնայ, աճի, ուռճանայ, գրողը այնքան ինքզինք հարուստ կը զգայ:

Ուրեմն եւ հաստատ՝ ընթերցողը գրողին հարստութիւնն է: Ան ինքզինք կը վերանորոգէ: Լրջօրէն կը հետեւի գրողի սրտէն ու մտքէն հոսող բոլոր ջերմ ու լայն խօսքերուն,

գրիչէն ծորող իրականութիւններուն եւ բառերով շաղուած ճշմարտութիւններուն: Կը հաւատայ, որ գրողին տողերը միայն գրական շարադրանքներ չեն, ո՛չ ալ պարզ կամ բարդ պոռթկումներ: Անկասկած անոր սինակները կամ պարբերութիւնները մէկական հրաւերներ են իրեն հասցեագրուած, իր տողերը ընթերցելու բարի բաղձանքով: Արդար եւ իրաւ:

Գիտե՞ք, լաւատեղեակ ենք բոլորս ալ, որ ժամանակը քմահաճ է, անողոք եւ անզիջող: Բայց, հակառակ ասոր, գրողը լաւատես սպասող մըն է եւ հաւատացող մըն ու լուսաւոր վաղուան:

Գրողը նաեւ վերապրող մըն է, ջերմութեամբ եւ թելադրանքով «խօսող» մըն է, նաեւ ազգային վերքերուն վրայ մատը դնող, սթափումի կոչեր ընող, համախմբումի հրաւիրող, հիւմորով քաջալերող, ազգին ցաւերով մտահոգուող յանդուզն գրիչ:

Անոր համար գրողը շատ ըսելիքներ ունի եւ կ'ունենայ միշտ խօսելիքներ, բողոքներ, ակնկալութիւններ, եւ տեսակետեր, անպատասխան հարցումներուն պատասխաններ, որոնք կը խռովեն հայու միտքը:

Մտաւորականի բնորոշ գիտակցութեամբ իր տողերը ջերմութիւն եւ գոհողութիւն բուրդոյարատե ճիգեր ալ են: Ան է, որ իր տաղանակի «երգերով» կ'ընթանայ դարուն հետ: Կը միանայ մարդոց խոլ ցաւերուն: Կը սողայ ընթերցողի մտքին մէջ եւ կեանքը կը վերաշինէ: Կը նորոգէ անոր հայու հաւատքը, նոր տարագով եւ խորքով: Տակաւին՝ գիտակից հայութիւնն է, ինչու չէ, նոյնքան ալ գաղութ կերտելու ճիգին կը սպասարկէ: Դիմագիծ եւ ինքնութիւն ցոյց կուտայ: Կը ներկայացնէ համոզումներ, կեցուածքներ, մտահոգութիւններ, հայ կեանքին հետ առնչուող երեւոյթներու մասին յստակ իրականութիւններ: Իր տողերով կը մտնէ ընթերցողի կեանքին մէջ, երջանկացնելու, սփոփելու, խրատելու, ամոքելու, ուժ եւ կորով ներմուծելու, զայն արթուն եւ կենդանի պահելու համար: Յաճախ բառերը դառնութեան ձայներով հիւսուած կ'ըլլան, բայց եւ այնպէս անպայման ընթերցողը հայու երագին կը կապեն:

Գրողը, իբրեւ ժամանակի տարեգիրք, նաեւ կը զգայ թէ ի՞նչ է ընթերցողին ապրած այս կեանքը: Ուստի ցուցմունքներ եւ թելադրանքներ կու տայ, կ'ընէ, կը հրամցնէ, որպէսզի ան շուարած չնայի ճակատագրի կոյր աչքին:

Լաւ կամ վատ ան ընթերցողին արդարամտութեան կը յանձնէ իր միտքերը:

Գրողին համար ստեղծելը կը դառնայ ցանկալի տառապանք:

Թուրքիոյ նուրջ

Âðø²Î²ÛîÛî°èàðÂ°²ÛÎ²Êàð²ÎàðÂÆòÛÀ
²ð°ðøàðîø³¼ª àðä³⁄è²ðî²øÆÛ
ø²ð²ø²Î²Û¶àðîúÛ

Թրքական արեւմտամետ լրատուամիջոցները կը շարունակեն մեծարել ԱՄՆ-ի եւ Եւրոմիութեան մնայուն նշանակութիւնը դժուար ժամանակներ ապրող Երտողանի կառավարութեան համար. «Առեւտուրը, ներդրումները եւ արհեստագիտութիւնը կը շարունակեն մնալ Թուրքիոյ վրայ Արեւմուտքի ճնշման ամենանշանակալի լծակը, որուն տնտեսութիւնը չի կրնար պահպանուիլ առանց տասնեակ միլիարտաւոր տոլարներու, որոնք կը մղտնեն անոր զանձարանը»: Առեւտուրի նախարարութեան պատրաստած զեկոյցին համաձայն, Թուրքիոյ առեւտուրը Եւրոպայի եւ Հիւսիսային Ամերիկայի հետ «կը մնայ փրկօղակ անոր տնտեսութեան համար», կը գրէ սզանտի-նաւեան երկիրներէն մէկուն մէջ տեղակայուած Nordic Monitor առցանց պարբերականի գլխաւոր խմբագիր, մեզի արդէն ծանօթ Ապտալլա Պոզդուրթ. Turkey's economic and financial viability relies on the West despite attempts at diversification - Nordic Monitor: «Եւ այս մէկը հակառակ Երտողանի կառավարութեան կողմէ զանազանութեան պահպանման բազմամեայ ջանքերուն, որ աւելի ու աւելի կը ձգտի սերտ կապեր հաստատել Իրանի, Ռուսիոյ եւ Չինաստանի հետ՝ յաճախ ՆԱԹՕ-ի իր դաշնակիցներուն հաշուոյն»:

Այսպէս, 2023-ին Թուրքիոյ արտահանման 41 տոկոսը ուղղուած է Եւրոմիութեան (այսուհետեւ՝ ԵՄ) 27 երկիր՝ կազմելով 104,3 միլիարտ տոլար՝ նոյն տարուան 255,8 միլիարտ տոլար ընդհանուր արտահանումէն: Նկատի առնելով եւրոպական այլ երկիրներ եւ Հիւսիսային Ամերիկան՝ ընդհանուր գումարը կը հասնի 160,6 մլր. տոլարի կամ համախառն արտահանման 62,8%-ին: Ընդ որում, ապրանքաշրջանառութիւնը զգալի չափով հաւասարակշռուած կը թուի, ինչ որ կը նշանակէ Թուրքիոյ՝ արեւմտեան երկիրներ արտահանման եւ այդ երկիրներէն ներմուծման համադրելի ծաւալներ: 2023-ին ԵՄ-էն Թուրքիոյ ներմուծումը կազմած է 106 մլր. տոլար, գրեթէ այնքան, որքան արտահանումը: 2022-ին Թուրքիոյ առեւտրային հաշուէկշռի դրական կշիռքը կազմած է շուրջ 10 միլիարտ տոլար: Անցեալ տարի Թուրքիան որոշ քանակ մը աւելի արտահանած, քան ներմուծել էր Հիւսիսային Ամերիկայի երկիրներէն: Անցեալ տարի թրքական արտադրանքի արտահանման գլխաւոր ուղղութիւնը



Գերմանիան էր՝ 21,1 մլր. տոլար (ընդհանուրի 8,2 տոկոսը): Անոր կը յաջորդէր ԱՄՆ-ը՝ 14,8 մլր. տոլար: Արտահանման 10 հիմնական ուղղութիւններու կարգին եօթը եղած են արեւմտեան պլօկէն, ինչպէս նաեւ, ինչ որ քնականաբար տրամաբանական է՝ Ռուսիան, Իրաքը եւ Արաբական Միացեալ Եմիրութիւնները: 2024-ի Յունուար-Յունիս ամիսներուն Թուրքիոյ արտահանումը Եւրոպա կազմած է 71,8 մլր. տոլար, ինչ որ կը կազմէ թրքական արտահանման ընդհանուր ծաւալի 57,2 տոկոսը եւ փոքր համեմատութեամբ կը գերազանցէ նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի ցուցանիշը: Ի հակադրութիւն, անցեալ տարի Ռուսիոյ եւ Չինաստանի հետ Թուրքիոյ առեւտուրը նկատելի բացասական մնացորդ ունեցաւ Թուրքիոյ համար, ինչ որ խորացուց անոր ընթացիկ հաշուի բացը: Թրքական արտահանումը Ռուսաստան կազմած է 10,9 մլր. տոլար (արտահանման ընդհանուր ծաւալի 4,3 տոկոսը), Ռուսիայէն ներմուծումը հասած է 45,6 միլիարտ տոլարի (12,6 տոկոս): Այլ խօսքով՝ Թուրքիա աւելի քան երեք անգամ աւելի շատ ծախսած է ռուսական տնտեսութեան ֆինանսաւորման վրայ, քան ստացած է անկէ, անհանգիստ երանգով մը կ'եզրահանագէ Nordic Monitor-ի հեղինակը: Նմանատիպ պատկեր կը նկատուի նաեւ Չինաստանի հետ առեւտուրի, որ Ռուսիայէն ետք ներմուծման երկրորդ աղբիւրն է Թուրքիոյ համար, եւ որ կազմած է 45 մլր. տոլար: Ընդ որում, ըստ աւելի կանուխ ներկայացուած տուեալներուն, յստակ կը դառնայ, որ Չինաստան նոյնիսկ չի մտնէր թրքական արտադրանքի արտահանման հիմնական ուղղութիւններու տասնեակին մէջ, ինչ որ կը յանգեցնէ Անգարայի համար առեւտրա-

Ալեքսանտր Գրիգորեւ
Աղբիւրը՝ vpoanalytics.com-ի
Թարգմանութիւնը՝ Գայիանէ Մանուկեանի
Շար.՝ էջ 8 ➤

Բայց, յստակ «բան» մը յանկարծ կը կաշկանդէ այս ուրախութիւնը, երբ ան չի տեսներ, չի գտներ բաւարար ընթերցող կամ ասոր կողքին, հայ գիրին գրաւոր տարածումը: Չմոռնանք... գրողը մեր մշակոյթի ինկարկուն ալ է, միաժամանակ հայ ընթերցողին տարբեր շունչ տուող, յիշեցնող, հայ դիմագիծ տուող ներուժ:

«Պահապանութեամբ կատարելը բարերար է».- ըսած են մեր մեծերը: Յըստակ է, թէ առանց ընթերցողի գրողը ոչինչ կ'արժէ: Իսկ առանց գրողին ալ, ընթերցողը գոյութիւն պիտի չունենար: Բայց այս երկուքն ալ կը ծառայեն հայ գիրի տարածման, բարգաւաճման եւ ուռճացման ճիգերուն: Պատիւ իրենց:

Պրիմալկես

Հին ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԵՐԸ



Մարուշ Երամեան

Հետաքրքրական է որ վաղուց, հին աշխարհին մեջ եւս սեղանի խաղեր եղած են, ոչ միայն Արեւելքի երկիրներուն մեջ, ինչպէս Եգիպտոսի, Հնդկաստանի, այլ նաեւ Եւրոպայի մեջ, ինչպէս Վայքինկներու աշխարհին՝ Տէնմարքի, Շուէտի, Նորվեգիոյ, նաեւ Սկոտլոնդ, Հռոմի եւ այլ երկիրներու մեջ:

Հռոմեական լեգեոնները իրենց ժամանակը կ'անցընէին խաղալով Ludus Latruncolorum խաղը, վայքինկները կը խաղային Hnefatafl խաղը իրենց ապրած երկիրներուն, նաեւ Այսլենտի մեջ, հին Եգիպտոսի մեջ կը խաղային Սենեթի եւ Մեհէնի խաղերը, իսկ Հնդկաստանի մեջ կը խաղային Չատուրանգան խաղը, որուն համար կ'ըսուի թէ ժամանակակից ճատրակի նախատիպարն էր:

ՍԵՆԵԹ

Հին աշխարհի ամենէն հին խաղերէն մէկը սենեթն է, որ յայտնագործուեց է Եգիպտական դամբարաններուն մեջ, 3500 թուականին:

Այս խաղին մեջ կ'օգտագործուին քարէ կամ փայտէ «կոճակներ», որոնց վրայ խորհրդանշաններ փորագրուած են: Պատմաբաններն ու հնաբանները վստահ չեն թէ այս խաղը ինչպէ՞ս կը խաղցուի: Բայց Թիմոթի Զենտըլ եւ Ռ. Պելլ փորձեր են կարգ մը գրութիւններու շնորհիւ այս խաղին օրէնքները ճշդել եւ խաղալու կերպը բացատրել:



խաղին օրէնքները.

Տախտակին վերի շարքին վրայ դնել քարերը:

Ըստ նետուած գառին, խաղցողը կը շարժէ իր քարերը:

Մէկ քառակուսիի մէջ միայն մէկ քար կարելի է դնել:

Խաղին նպատակն է բոլոր քարերը վերցնել տախտակէն: Կը շահի ան, որ իր քարերը կը վերցնէ տախտակէն:

Պահպանուած է խաղին շատ գեղեցիկ մէկ օրինակը, որուն վրայ կ'երեւի քարերը պահելու դարակը:

Այս խաղը շատ սիրուած է Եգիպտոսի նշանաւոր դէմքերուն կողմէ, ինչպէս Թուրանամուսի եւ Ռամսիս Բ.-ի կնոջ Նեֆերտարիի կողմէ, եւ խաղցուած է այնքան վաղ, որքան Բ.Ա. 3100 թուականը, երբ Եգիպտոսի առաջին կայսրութիւնը սկսեց Եր կորսնցնել իր փառքը:

ՆԱՐՏԻ

Արեւելքի մէջ այնքան տարածուած գտած է սիրուած խաղը՝ նարտին շատ հին խաղ է, հին Միջագետքի մէջ գտնուած (այսօրուան Իրաքի տարածքը):

Այս խաղը այնքան սիրուած է տարածուած է, որ Նոյնիսկ առցանց կարելի է խաղալ գայն այսօր:

Գտնուած է Բ.Ս. 3000 թուականին, ոչ ամբողջական խաղը, որուն քարերը պատրաստուած են ... մարդկային ոսկորներէ: Թերեւս մահացած գերիներու ոսկորներէ ... Օ՛Ֆ, ինչ դաժան է, չէ՞:

Խաղալու կանոնները անշուշտ որ զարգացում ունեցեր են այսքան ժամանակի ընթացքին, բայց ամենամեծ փոփոխութիւնը կատարուել է 1920-ականներուն, երբ երկու գառի գոյութիւնը անկէ հետաքրքրական դարձուցեր է խաղը: Չայն խաղալու համար խաղցողը որոշ ռազմավարութիւն պէտք է ունենայ, բան մը որ մեծ թիւով խաղցողներ կը ներգրաւէ այսօր:

ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ՈՒՐ (ՍՐ)

Ուր թագաւորական խաղը ծագում առեր է Հին Միջագետքի մէջ, մօտաւորապէս Բ.Ա. 2600 թուականին: Այս խաղին տախտակներուն նմանօրինակները յայտնաբերուել են նաեւ Հին Եգիպտոսի դամբարաններուն, ինչպէս Թուրանամուսի դամբարանին եւ Հնդկաստանի մէջ:

Երկու խաղցողները կը նետեն զանոնք շատ անսովոր ձեւ ունեցող տախտակին վրայ եւ կը փորձեն իրենց քարերը շարժել տախտակին մէկ ծայրէն մինչեւ միւսը:

Նոյն այս տախտակին մէջտեղի քառակուսիները օգտագործուել են նաեւ բախտագուշակութիւններ ընելու համար:

ՄԱՆԿԱԼԱ



Կը յիշեմ այս խաղին տախտակը տեսած ըլլալս Հայկի մէջ, բայց չեմ յիշեր ո՞ր. չեմ յիշեր նաեւ թէ ինչպէ՞ս կը խաղային այս խաղը. բայց տախտակին տեսքը միայն հին ու քաղցր օրեր կը յուշէ:

Այս խաղին ամենէն հին օրինակը գտնուել է Եթովպիոյ մէջ, 6-րդ դարուն, իսկ

անոր մասին առաջին գրութիւնը եղած է արաբերէնով, 10-րդ դարուն: Յստակ չէ թէ խաղը ո՞ր ծագում առեր է, բայց յստակ է, որ արաբ վաճառականներ քերեր են գայն: Ըստ կարգ մը բացատրութիւններու Մանկալա անունը արաբերէն նագալա - կրել, փոխադրել բառին տառափոխուած ձեւն է:

Ընդհանրապէս ծովային խիճեր կ'օգտագործուին այս խաղին մէջ: Խաղցողներէն մէկը բոլոր քարերը կը հաւաքէ մէկ փոսիկի մէջ, ապա ժամացոյցի սլաքներուն հակառակ ուղղութեամբ գանուք իւրաքանչիւր փոսիկի մէջ կը դնէ, մինչեւ վերջանան:

ՏԱՖԼ

Հին Սկանդինավիոյ ամենէն յայտնի խաղերէն մէկը ռազմավարական խաղերու ընտանիքին կը պատկանի, որոնք ծանօթ են Tafl անունով: Նորտիք ժողովուրդները այս խաղը խաղցեր են 400 թուականին, ըստ Օքսֆորտի «Սեղանի խաղերու Պատմութիւն» գիրքին: Այս խաղերը տարածուել են մինչեւ Այսլենտ, Բրիտանիա եւ Իրլանտա, բայց մոռցուել են, որովհետեւ 11-րդ եւ 12-րդ դարերուն շախմատը շատ անելի տարածուած էր:

Ludus Latruncolorum

Հռոմեական այս խաղը եւս ռազմական է, որ երկու անձերով կը խաղցուի եւ որուն միջոցով մասնակիցներուն ռազմական հմտութիւնը ի յայտ կու գայ:

Արիստոտել խօսած է այս խաղին մասին եւ ըսած, թէ «մարդը առանց քաղաք-պետութեան կը նմանի խաղին միայնակ քարին, որ դիրքաւ կը բռնուի հակառակորդին կողմէ»:

Այս խաղը առաջին անգամ յիշատակուել է առաջին դարուն, հռոմեացի գրող Վարրոնի կողմէ, որ նկարագրեր է խաղին թանկարժէք քարերը: Երկու հարիւր տարի անց Լաուս Պիզոնիս կը նկարագրէ խաղին մանրամասն օրէնքները: Իսկ բանաստեղծներ Օվիտ եւ Մարսիալ իրենց գրութիւններուն մէջ անդրադարձեր են անոր, ինչ որ կը նշանակէ թէ խաղը իր ժամանակին շատ սիրուած է տարածուած է:

ՔԱՏԻ

Այս խաղը ստեղծուել է Հարաւային Ամերիկայի մէջ: Ազդեցներուն քով խաղը շատ խիստ կանոններ ուներ, որոնք մանրամասնօրէն յիշուած են Օքսֆորտի «Սեղանի խաղերու Պատմութիւն»-ին մէջ:

Կարելի է երկու խօսք ալ ըսել Օքսֆորտի «Սեղանի խաղերու Պատմութիւն»-ին մասին (The Oxford history of board games), գրուած Տեյլիտ Փարլէթի կողմէ (David Parlett):

Գիրքը, որ գրուած է 1999-ին, կը պարփակէ չորս հազար տարուան հնութիւն ունեցող խաղերը, իրենց բոլոր մանրամասնութիւններով: Այդ խաղերէն շատերը հասեր են մեզի այնպէս ինչպէս որ էին, իսկ կարգ մը այլ խաղեր փոփոխութիւններ կրեր են եւ անելի յարմար դարձեր ներկայ ժամանակներուն համար:

Ճատրակէն - որ ամենէն հին խաղերէն մին կը համարուի - մինչեւ մոնոփոլի, կամ բառխաղ (scrabble), որոնք նոր ստեղծուած խաղեր են, հեղինակը տարբեր խմբաւորումներու բաժներ է՝ հետապնդումի, որսորդութեան կամ ռազմական խաղեր, որոնցմէ իւրաքանչիւրին ծնունդին եւ եղափոխութեան շրջանները ներկայացուցեր է:

Հեղինակը մասնագետ է այս նիւթին - ինչ հետաքրքրական եւ հաճելի մասնագիտութիւն - իսկ գիրքը արգասիքն է քսան երկար տարիներու հետեւողական պրպտումի եւ աշխատանքի:

Այստեղ հաւանաբար տեղն է յիշելու, որ այս տարուան ընթացքին Hasbro ընկերութենէն լոյսին եկած է Սեւան Հանրմեանի իրագործած եւ Armenia կոչուած մոնոփոլի խաղը, որուն նշանակները (tokens) լրիւ հայկական են, իսկ անոր ընկերացող գրքոյկը կը նկարագրէ իւրաքանչիւր «կալուած»-ի վայրը, Հայաստանի մէջ:

§ Գ Զ Ս Ծ Զ Ե Ծ Դ Դ Ա Շ Տ Ո Ն Ա Թ Ե Ր Թ Ի Ա Ն Ա Ն Ա Կ Ա Չ Ս

- Խմբագիր՝ Չարմիկ Գիլմբոջեան-Պողիկեան
- Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
- Օգնական սրբագրիչ՝ Աննա Սաղապարեան
- Ձեւաւորող՝ Յովսէփ Գալստեան
- Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
- Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
- Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
- Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Գիլմբոջեան
- Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811
- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուի կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՐՈՒՄԾ



Արմեն Արք.

Դարեր շարունակ եկեղեցւոյ եւ եկեղեցական կեանքին նկատմամբ միշտ ալ թիրախաւորումներ, յարձակումներ, բամբասանքներ, ծաղր ու ծանակներ եղած են, եւ վստահ եմ, որ այս բոլորը պիտի շարունակուին նոյն ոճով եւ թերեւս ալ ավելի զօրաւոր ու ազդեցիկ կերպով ընթանան:

Վերջերս բոլորս ականատես եղանք Ֆրանսայի մէջ տեղի ունեցած Ողիմպիական խաղերու բացման հանդիսութեան ընթացքին Քրիստոսի վերջին ընթրիքի պատկերին ծաղր ու ծանակ դառնալուն՝ անճոռնի, բիրտ, անբարոյական եւ տհաճ արարքով մը: Համաշխարհայնացման մասշտապին մէջ, ականատես ըլլալով այս արարքին տհաճութեան, մենք՝ իբրեւ քրիստոնեաներ, ընելիք եւ ըսելիք ունինք:



Դարերէ ի վեր ազգը պահողը, հաւատքի մատակարարումը կատարողը, կեանքի բարոյականը ուսուցանողը, հաւատացեալը ճշմարիտ եւ ուղիղ ճանապարհի մէջ դնողը եղած է միայն ու միայն եկեղեցին: Ոչ մէկ թագաւորութիւն, իշխանութիւն կամ պետութիւն, թագաւոր կամ նախագահ կրցած է ժողովուրդին տալ այն ինչ որ եկեղեցին դարեր շարունակ տուած է իր հաւատացեալներուն եւ համաշխարհայնացման ներկայ տագնապին մէջ կը շարունակէ տալ առանց ակնկալութեան:

Միշտ ալ պիտի ըլլան մարդիկ, կազմակերպութիւններ եւ սատանայական ազդեցութեան տակ գործող հաստատութիւններ, որոնք պիտի հարուածեն եկեղեցին, բայց անիկա, իբրեւ Աստուծոյ ժողովուրդի հաւաքոյթ եւ Քրիստոսի անխախտ վեմին վրայ շինուած կառոյց, չի սասանիր ոչ մէկ փոթորիկէ կամ քայքայումէ:

Վարդանանց պատերազմի ընթացքին, հայոց քաջարի նախարարները, կանգնած Յազկերտին դիմաց, խրոխտաբար կ'ըսէին. «Եկեղեցին մարդկային շինուածք չէ. եկեղեցին ո՛չ թագաւորներու պարգէն է, ո՛չ ճարտար արուեստի արդիւնք, ո՛չ իմաստուններու գիտ, ո՛չ զինուորներու քաջութեամբ ձեռք բերուած անար եւ ոչ ալ դէտերու մուլար խաբէութիւն. երկրի վրայ չես կրնար ցուցնել որեւէ բան, որ քան ալ վեհ ըլլայ անիկա կամ վատ, որմէ որեւէ տեղ եկեղեցի յառաջ գայ: Եկեղեցին Աստուծոյ շնորհքն է, տրուած ոչ թէ մարդոցմէ ոեւէ մէկուն, այլ բոլոր բանական ազգերուն, որոնք վիճակուած է այս արեւուն տակ բնակիլ: Անոր հիմերը հաստատուն վեմի վրայ դրուած են. ոչ մարդիկ կրնան շարժել, ոչ ալ հրեշտակները՝ սասանեցնել» (Եղիշէ):

Հետեւաբար Եւրոպան կամ ընդհանրապէս Արեւմուտքը, ինչ միջոց ալ օգտագործեն, պիտի չկարենան խափանել Սուրբ Եկեղեցւոյ նկարագիրը, պիտի չկարենան աղաւաղել Սրբազան Եկեղեցւոյ պատկերը եւ անոր սրբութիւնները: Աստուած, իբրեւ բարեգութ եւ արդար, երբ յարմար ժամանակը գայ, Ինք արդար դատաստանը պիտի կատարէ բոլոր մոլորեալներուն:

ՀԱՄԱՍԵՂ ԵՒ...

ՎՍԿԻՊՔ՝ էջ 5

քաղաքականին հետ: Պատկերը հակառակը տեսած եմ ձերիններուն մէջ. նոյնիսկ խուսափած են անուսի յիշատակութիւն ընելէ անգամ: Է՛հ, հին վերջ է այդ:

Այո՛, «մերինները» եւ «ձերինները»...: Հին վերջ է այդ...:

Վերոնշեալ «Նամակակ»-ին մէջ Համաստեղի կողմէ Վահէ-Հայկի ուղղեալ վերջին նամակը թուագրուած է 30 Յունուար 1960: Նամակագիրը կը յայտնէ որ ստացած է Խարբերդի նշանաւոր պատմագիրը ու հաճոյքով թերթատած է զայն: Յետոյ կ'աւելցնէ.

- Ուրախ եղայ, որ Հայաստանի մէջ կը հրատարակուի ձեր «Հայրենի Ծխան» գիրքը: Ինձ չվիճակուեցաւ Հայաստան երթալ, այլ խօսքով՝ չկրցի օգտուիլ ինձ եղած հրաւերէ մը: Միշտ ալ կը յուսամ որ պիտի երթամ օր մը:

Ահա՛ Համաստեղի իրա՛ն ցանկութիւնը. Հայաստան մեկնիլ...:

Առանձին պատմութիւն է այս՝ Խորհ. Հայաստան այցելելու Համաստեղի ուղղեալ պաշտօնական հրաւերը ու իր... վարանումները:

Ափսո՛ս: Համաստեղ չկրցաւ իրականացնել այդ բաղձալի ճամբորդութիւնը, որովհետեւ կաթուածահար ինկաւ բեմին վրայ՝ իրեն ի պատիւ սարքուած յոբելեանական հանդիսութեան պահուն, իր սրտի խօսքը կարդացած ատեն, Լոս Անճելոս, 26 Նոյեմբեր 1966-ին...:

Ãðø²Ï²ÛîÛî°eàðÃ°²Û...

ՎՍԿԻՊՔ՝ էջ 6

յին հաշուեկշռի էական բացասական կշիռքի: Ծառայութիւններու ոլորտը եկամտաբեր դարձնելու տեսանկիւնէն արեւմտեան երկիրները նոյնպէս կարելի է նշանակութիւն ունին Թուրքիոյ համար: Անցեալ տարի այս երկիր այցելած է 6,6 միլիոն զբօսաշրջիկ Եւրոպայէն, ինչ որ կը կազմէ ընդհանուրի 49,8 տոկոսը եւ 54,3 միլիարդ տոլարի կէսը, որ Թուրքիան վաստակած է զբօսաշրջութենէն: 372 հազար ամերիկացիներ ժամանած են, ինչ որ կը կազմէ զբօսաշրջիկներու ընդհանուր թիւին 2,47 տոկոսը: Միանգամայն տրամաբանական է, որ 2022-2023 թուականները յատկանշուած են ռուս զբօսաշրջիկներու թիւի կտրուկ աճով՝ տարեկան մօտ 1,8 մլն. մարդ՝ 2021-ի պսակաւոր ժահրի համաճարակի տարուան 854 հազար մարդու դիմաց: Այս աճը հիմնականապէս հիմնուած է Ռուսիոյ դէմ արեւմտեան պատժամիջոցներով, որոնք դժուարութիւններ յառաջացուցած են եւրոպական հանգըստավայրեր եւ յարակից ծառայութիւններ մուտք գործելու առումով:

(Յօդուածը ամբողջութեամբ կարդալ հետեւեալ կապին ճամբով՝ <https://yerkir.am/hy/article/2024/08/03/34813>)

ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Հայ Աւետարանական Բեթել Երկրորդ. վարժարանը կարիք ունի հետեւեալ պաշտօնեաներուն.

-Անգլերէն լեզուի ուսուցիչի,

-Տեսուչի:

Փափաքողները անհրաժեշտ է, որ ունենան մասնագիտական համապատասխան վկայական:

Դիմելու համար ներկայանալ Բեթել Երկրորդ. վարժարան Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերը, ժամը 10:00-էն 12:00:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կրթասիրաց Ս: Չճնմպերճեան Երկրորդ. Վարդարանը 2024-2025 տարեշրջանին համար կարիք ունի հետեւեալ պաշտօնեաներուն.-

* Տեսուչի,

* Նախակրթարանի հայերէնաւանդ ուսուցիչի,

* Երաժշտութեան ուսուցիչի,

* Գծագրութեան ուսուցիչի,

* Տնտես մայրիկի,

* Վարորդի:

Փափաքողները կրնան ներկայանալ վարժարանի տնօրէնութեան ամէն օր առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կէսօրուան ժամը 1:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

www.kantsasar.com

ՏԵՍԱԿԵՏ

«ՕՍԳԱՐ»-Ը ՕՍԳԱՐ Կ'ԱՐԺԵ՞

Հալեպահայությանը նախորդ ամսուան ընթացքին, մեծ խանդավառությամբ կը սպասեր Համագրայինի «Լ. Շանթ» Թատերական Միաւորին կազմակերպած «Օսգար» կատակերգութեան: Միաւորին դիմատետրի վրայ տեղադրած թատերական պատահիկները աւելի կ'ոգտուէին մեզ եւ բոլորիս հետաքրքրութիւնը կը շարժէին: «Արդեօք ի՞նչ է Նիւթը», կը մտածէինք: Մենք, որպէս թատերասեր երիտասարդներ, որոշեցինք կարգի բերել մեր քննութիւններու նախապատրաստական աշխատանքը եւ անպայման ներկայանալ թատրոն: Շատ մեծ սպասումներ ունէինք, բայց ...

Չրուցելէ եւ քննարկելէ ետք, որոշեցինք այս յօդուածով ներկայացնել մեր հետեւեալ տեսակետները:

Թատրոնի նիւթը չափահասներու համար նախատեսուած էր, սակայն սրահին մէջ նկատելի թիւով պատանիներ կային: Յաճախ կը լսէինք «Ի՞նչ ըսել է այս բանը», «Ինչո՞ւ ատանկ ըսաւ» եւ նոյնանման հարցումներ, որոնք պատանիները շփոթի կը մատնէին երբեմն:

Թատրոնը, ըլլալով «կատակերգութիւն», շատ պարզ ու սրամտութիւններէ գուրկ կը թուէր: Այսինքն կատակները հիմնուած էին առաւելաբար կրկնուող շարժումներու վրայ: Այլ խօսքով դերակատարները կը փորձէին ժողովուրդը խնայցնել նոյն նախադասութիւնները, նոյն շարժումները կրկնելով քանի մը անգամ: Այս մէկը նկատած էինք նաեւ, հաւանաբար աւելի ինչեղ կերպով, անցեալ տարուան «Փայտօղիներու Պահարան»-ի ներկայացման մէջ, որուն ընթացքին ինչեղ նախադասութիւնները մինչեւ օրս կը լսենք մեր առօրեայ կեանքին մէջ:

Անդրադառնալով նիւթին նկատեցինք, որ շատ նման էր նախորդ տարուան ներկայացուած «Փայտօղիներու Պահարանը» թատերգութեան պատմութեան՝ դերակատարներուն կատակներով թէ կերպարներով: Ժողովուրդին անգամ մը եւս հրամցուեցան նոյն խափն պատկանող, սակայն մասամբ տարբեր նկարագրերու տեր մարդոց առօրեայէ պատկերներ: Նկատելի նորութիւն մը չկար:

Սագօ Խալոյեան «Գանձասար»-ի նախորդ թիւին մէջ ստորագրած իր յօդուածով նշած էր. «Թատրոնը կլանեց մեզ, անդրադարձուց մշակոյթի ուժեղ դերին՝ մարդու եւ հաւաքականութեան ներաշխարհի հարստացման մէջ», բայց ներկայիս չենք տեսնում այդ մէկը, հաւանաբար ատիկա կարելի կ'ըլլար հաստատել դերակատարներու կատարողական որակի բարձրացման պարագան նկատի ունենալով առաւելաբար:

«Օսգար» կատակերգութիւնը կը ներկայացնէր ֆրանսացի ընտանիքի մը կեանքէն ծիծաղաշարժ պատմութիւն մը: Ֆրանսացի թատերագիրի մը գործն էր: Մենք սխալ չէնք տեսներ ծանօթանալ այլ ազգերու մշակոյթին, իրազեկ դառնալ անոնց ստեղծագործութիւններուն, բայց արդեօք մեր հայկական թատերգութիւնները, մեր հայ ընտանիքներուն հարցերն ու պատմութիւնները մեզի համար աւելի հետաքրքրական չեն, որ կը դիմենք օտար գրողներու: Ֆրանսական հիւմորը կը տարբերի հայկականէն, կրնայ ըլլալ հայ հանդիսատեսին համար այն-

տերագիրի մը գործն էր: Մենք սխալ չէնք տեսներ ծանօթանալ այլ ազգերու մշակոյթին, իրազեկ դառնալ անոնց ստեղծագործութիւններուն, բայց արդեօք մեր հայկական թատերգութիւնները, մեր հայ ընտանիքներուն հարցերն ու պատմութիւնները մեզի համար աւելի հետաքրքրական չեն, որ կը դիմենք օտար գրողներու: Ֆրանսական հիւմորը կը տարբերի հայկականէն, կրնայ ըլլալ հայ հանդիսատեսին համար այն-




քան ալ զուարճալի չթուի: Մեր հանդիսատեսը, որ տարին բախտաւոր պարագային մէկ կամ երկու թատերգութիւն վայելելու շնորհիւ կ'ապրի, պիտի չնախընտրէ՞ր աւելի հարգազատ եւ սրտին մօտ նիւթեր վայելել: Ունինք հայ երգիծաբաններու հրաշալի գործեր, ինչպէս՝ Երուսաղէմ Օտեանի «Թափառաշրջիկները», ուր կը ներկայացնէ տարբեր բնաւորութիւններու տեր, ընկերային տարբեր խաւերու պատկանող մարդիկ, որոնք իրենց առօրեայ կեանքին մէջ կը հանդիպին դժուարութիւններու, անհաւասարութեան ու կեղծիքի: Ունինք Յակոբ Պարոնեանի «Ատամաբոյժ Արեւելեան»-ը, Գաբրիէլ Սունդուկեանի «Խաթաբալա»-ն, որոնց այնքան հաճոյքով կրնայ հետեւիլ հալեպահայ հանդիսատեսը ու ինքզինք գտնել անոնց մէջ:

Բեմադրիչը «Գանձասար»-ի հետ ունեցած իր հարցազրոյցին մէջ կ'ըսէր, թէ ներկայացուելիք նիւթը կ'ընտրէ ըստ ժողովուրդի պահանջին: Սակայն ներկայացուած վերջին երկուքը նմանօրինակ էին մասամբ: Ժողովուրդը թէեւ կատակերգութիւն կը սիրէ, յատկապէս Հալեպի ծանր պայմաններուն մէջ տոկացող ժողովուրդը, սակայն կը նախընտրէր տարբեր նիւթեր դիտել, կամ գէթ հարազատութիւն մը գտնել, իրեն անհրաժեշտ պատգամ մը քաղել ներկայացուած թատերգութեան ընդմէջէն:

Այս բոլոր արձանագրելով, սակայն, կ'ուզենք գնահատել դերասանները, որոնք իսկապէս նոր մակարդակ նուաճած էին շնորհիւ բեմադրիչին մասնագիտական ճիգերուն: Ուստի յաջողութիւն մաղթելով գալիք աշխատանքներուն, կը ցանկանք մեզի հարազատ, մեր տաղանակները արտացոլացնող, մեր առօրեան ներկայացնող թատերգութիւններ վայելել յառաջիկայ շրջաններուն:

Խումբ մը երիտասարդներ

ՕՃԻ ԾՔԻ ԾՉՄ ԾՉ ԷՆԻ ԶԲՕԻ ՕՃ



Յովիկ Տասաղեան

Մեզմէ շատեր իրենց կեանքին մէջ ունին արժէքներ, որոնց կառչած կը մնան մտքով եւ հոգիով: Այդ արժէքները կրնան նիւթական կամ բարոյական ըլլալ, սակայն ինչ ալ ըլլան, ու ինչ ալ ըլլայ մարդոց կարծիքը անոնց մասին, ինքորոյ առարկային համար սրբութեան համագոր կը մնան:

Ինծի համար այդ արժէքը դրախտաշերտ մըն է այս մոլորակին վրայ, որուն վրայ 1947-ին, իբրեւ աստուածային հրաշալի լոյս, հայրենասիրութիւն բուրդ կառոյց

լորտը, զբօսանքի զանգին սպասելու հրճուանքը, ընկերներու հետ խաղի, զրոյցի, տաղնապի անմոռանալի ժամերը եւ վերջապէս վարժարանի իւրաքանչիւր անկիւնի մէջ մեր ապրածները:

Վերջին զանգը մեծ վերք մը բացաւ սրտիս մէջ, հրաժեշտի վերքը: Երբ իմացայ, որ տաքուկ օջախիս մէջ վերջին պահը կ'ապրիմ, սարսուռ մը անցաւ մարմինէս: Թէեւ ուրախ էի ուսումնական կարեւորագոյն շրջանը յաջողութեամբ բոլորելու համար, սակայն տիրութիւնը



մը փայլեցաւ, փայլեցուց եւ տարիներէ ի վեր կը շարունակէ լուսաւորել սերունդներու ճանապարհը, զգուշացնելով զիրենց՝ ապագային հոսանքներէ, քաջալերելով՝ մայրենի լեզուի օգտագործումը, հաստատելով որ ան է միակ միջոցը, որ մեզ կը կապէ հայկական արմատներուն, կ'երաշխաւորէ Հայրենիք մեր վերադարձը եւ վերջապէս ազգային ու համայնքային կեանքին առնչակից կը պահէ մեզ:

Այդ հօգը կառոյցը Ազգային Բարեն Եփփէ Ճեմարանն է: Այս օջախին մէջ անցուցած եմ կեանքիս ամենագեղեցիկ օրերը, ապրած եմ ամենաշքերտ պահերը, զինուած եմ ազգային ոգիով եւ դաստիարակուած հայեցի շունչով՝ լաւագոյն ուսուցիչներու հսկողութեամբ:

Ճեմարանը յատուկ է ընկերային մօտեցումով իր դաստիարակներուն, որոնք յաջողած են կայուն կապեր հաստատել աշակերտներուն հետ՝ դպրոցէն ներս թէ դուրս:

Բառերը բաւարար չեն հրաժեշտի այս պահու զգացումներս արտայայտելու համար: Անկարելի է մոռնալ դասարանի ուրախ մթնո-

կը պատեր հոգիս երբ յիշէի, որ հասած է այս սրբավայրէն հեռանալու պահը:

Սիրելի՛ ընկերներ, վեց տարիները կայծակի արագութեամբ սուրացին: Շատ ուրախ եմ ձեզմէ իւրաքանչիւրին հետ ծանօթացած ըլլալու եւ ձեզմէ շատ բաներ սորված ըլլալու համար: Յոյսով եմ, որ մեր ընկերութեան ճանապարհը այստեղ կանգ չ'առնէր, ու մենք միասնաբար կը շարունակենք ընթանալ Ճեմարանի առաքելութեան ուղիէն՝ կը պահենք մեր լեզուն, մեր մշակոյթը, մեր պատմութիւնն ու հաւատքը, ինչպէս նաեւ՝ իրարու տեր տիրական դառնալու մեր գեղեցիկ ասանդոյթը:

Կը մաղթեմ, որ մեզմէ իւրաքանչիւրը հասնի իր նպատակին:

Ջերմագին շնորհակալութիւններս կը յայտնեմ մեր ուսուցչական կազմին եւ տնօրէնութեան, որոնք ճիգ չ'ենայցեցին լաւագոյնը աւանդելու մեզի:

Երախտապարտ եւ հպարտ կը զգամ, որովհետեւ Ճեմարանը կեանքիս կարեւորագոյն արժէքներէն մէկը դարձաւ:

ՊՉՂՔԻ ԶՕՁՕՍՕՏԻ ԱՆ ԻՔՕՕՕՕՍՕ...

Սկիզբ՝ էջ 1

ուածային ոչնչացման դէպքերուն նկատմամբ: Յատկանշական է, որ նշուած դրոյթները յստակօրէն ամրագրուած են ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանի 2023 թուականի 17 Նոյեմբերի հրամանով, ինչպէս նաեւ առանձին պետութիւններու եւ միջազգային կազմակերպութիւններու յայտարարութիւններուն մէջ:

Նկատի առնելով վերագրեալը եւ գիտակցելով, որ այս թեմաները պետք է ըլլան առաջնահերթօրէն Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքական օրակարգին վրայ՝ կոչ կ'ուղղենք աշխարհասփիւռ հայութեան եւ Արցախի բարեկամներուն գործուն աջակցութիւն ցուցաբերելու վերոյիշեալ արշալիս: Կը խնդրենք կիրառել հասանելի բոլոր գործիքները արշալիս սահմանած նպատակներուն իրագործման համար: Վստահ ենք, որ միատեղ ջանքերով կրնանք հասնիլ արդարութեան եւ ապահովել մեր ժողովուրդի իրաւունքներուն պաշտպանութիւնը»:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Բազմաթիւ հաճելի անակնկալներ կը սպասեն ձեզի: Պաշտօնի բարձրացում մը պիտի վայելէք եւ հպարտանաք:



Ցուլ

Կեանքի ընկերոջ հետ ծովագրքին ռոմանթիկ պահեր պիտի ապրիք: Ձեր բոլոր ծրագիրներուն յաջողութիւնը շուտով պիտի վայելէք:



Երկուորեակ

Ձեր ժամանակաւոր խնդիրները պիտի լուծուին շնորհիւ ձեր դիւանագիտութեան: Խուսափեցէ՛ք նախանձոտ մարդոցմէ:



Խեցգետին

Ձեր առողջութիւնը հիանալի կերպով պիտի բարելաւուի: Սիրային գետնի վրայ նոր յարաբերութիւն մը պիտի մշակէք եւ երջանիկ զգաք:



Առիծ

Յոգեպէս պայծառ էք, սակայն նպատակներ իրագործելու ճամբուն մէջ խոչընդոտներու պիտի հանդիպիք: Բաջասիրտ եղէ՛ք:



Կոյս

Արդիւնաւետ աշխատանքներ եւ եկամտի աճ կը սպասեն ձեզի: Անհրաժեշտ է ժամանակ տրամադրել բժախնդիր գործի ձեռնարկելու համար:



Կշիռք

Ամենահաւասարակշռուած անձնաւորութիւնն էք: Դուք կը պարտադրէք յարգանքն ու մեծարանքը: Ձեր առողջութեան ալ հոգ պետք է տակիք:



Կարիճ

Ձեր կեանքին մէջ փոփոխութիւններ տեղի պիտի ունենան, սակայն մի՛ արտօսէք, որ յուզումները ճնշեն ձեր վրայ: Ձեր տաղանդը օգտագործեցէ՛ք, որպէսզի յառաջանաք:



Աղէնաւոր

Դեկավարութեան պաշտօն պիտի ստանձնէք: Այնուամենայնիւ ձեր ընտանիքի անդամներուն ալ հոգ պետք է տակիք:



Այծեղջիւր

Ձեր բոլոր աշխատանքային խնդիրները պիտի լուծուին եւ դրական արդիւնքներու պիտի հասնիք: Ձեր սիրելիին հետ հաճելի պահեր պիտի ապրիք:



Ջրհոս

Սիրոյ մէջ լուրջ փոփոխութիւններ պիտի ապրիք եւ ճակատագրական հանդիպում մը պիտի ունենաք ձեր գործատիրոջ հետ: Մի՛ անհանգստանաք:



Ձուկ

Մեծ յաջողութիւններ պիտի ունենաք ձեր աշխատասիրութեան շնորհիւ: Ձեր ընտանիքի անդամներուն եւս ժամանակ տրամադրեցէ՛ք:



ԻՆՉՊԻՍԻ՝ ՕԳՏԱԿԱՐ ՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԽԱՂՈՂԸ

Խաղողը կը դասուի համեղ պտուղներու շարքին: Ան ոչ միայն համեղ է, այլեւ շատ գեղեցիկ իր աճման բոլոր փուլերուն մէջ: Խաղողի որթատունկը կրնայ ունենալ 30-40 մեթր հասակ: Անիկայ կը պարունակէ ջուր՝ 55-87 %, 16-26 % շաքար, C, B1, B2, B6, B12 կենսանիւթեր: Խաղողի բոլոր տեսակներէն կը պատրաստուին գինի, օղի, քացախ եւ ռուպ: Տեղին է յիշել, որ գինիի պատրաստութեան ատեն խաղողը իր օգտակար յատկութիւնները չի կորսնցներ:

Խաղողի հատիկներէն պատրաստուած հիւթը կ'օգտագործեն սակաւարիւնութեան, սրտային հիւանդութիւններու բուժման համար: Նախընտրելի է հիւթը պատրաստել առանց ջուր եւ շաքար աւելցնելու անոր:

Խաղողը ունի նաեւ հետեւեալ օգտակար յատկութիւնները.

Անիկայ կը խթանէ ծանրութեան կորուստը: Կրաստանի համալսարաններէն ներս իրականացած հետազոտութիւնները պարզած են, որ խաղողին մէջ ռեսվերաթրոլ կոչուած նիւթը կը նպաստէ նիւթախալու գործընթացին: Ան կտրական ձե-

մինիս բոլոր մասերուն: Խաղողը նաեւ արեան ճընշումը իջեցնելու կարելիութիւն ունի: Որոշ գիտական ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, որ օրական 10 միլիկրամ ռեսվերաթրոլ ընդունելով կտրականապէս կը նուազեցնեն սրտի կաթուածին վտանգը:



Ան ուղեղին առողջութիւնը կը պաշտպանէ. Չուիցերիոյ հետազոտողներու կատարած ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ ռեսվերաթրոլը ունի դրական մեծ ազդեցութիւն ուղեղի առողջութեան վրայ: Անոնք պարզած են, որ այս նիւթը կարելիութիւն ունի չեզոքացնելու ուղեղի ազատ ռատիքալները՝ այսպիսով նուազեցնելով Ալզհայմըրի հիւանդութեան զարգացման վտանգը:

Ան կը բարելաւէ յիշողութիւնը. Մեծն Բրիտանիոյ մէջ տեղի ունեցած հետազոտութիւնները ցոյց տուած են, որ ռեսվերաթրոլը 200%-ով կը բարձրացնէ ուղեղի արեան շրջանառութիւնը: Գիտականներ կը կարծեն, որ այդ նիւթը կրնայ բարելաւել մեր մտաւոր ունակութիւնը:

Ան մաշկը կը պաշտպանէ քաղցկեղէն. բազմաթիւ հետազոտութիւններ ցոյց տուած են ռեսվերաթրոլի դրական ազդեցութիւնը քաղցկեղի դէմ պայքարին վրայ: Այս բաղադրիչը, որով հարուստ է խաղողը, կը պաշտպանէ մաշկը արեւուն վնասակար ճառագայթներէն:

Ան մարմինը կը պաշտպանէ ճառագայթումներէն. այս բաղադրիչը ունի ուժեղ եւ պաշտպանիչ ներգործութիւն ճառագայթային բուժման ընթացքին:



ուով կը նուազեցնէ բջիջներուն ճարպ հաւաքելու կարելիութիւնը եւ կը խթանէ ճարպային բջիջներու ոչնչացումը:

Ան կը պաշտպանէ նաեւ սիրտը: Ռեսվերաթրոլը ունի արեան անօթներու ճկունութիւնը ապահովող կարողութիւն, ինչ որ կը դիւրացնէ արեան շրջանառութիւնը, իսկ այս պարագային թթուածինն ու սնուցող նիւթերը կը մատակարարուին մար-

ԳԻՆԻ ԵՎ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Խաղողը կը պատրաստեն սպիտակ եւ կարմիր գինի: Բոլորս գիտենք, որ ոգելից ըմպելիին մեծաքանակ օգտագործումը վտանգաւոր է առողջութեան համար: Միեւնոյն ատեն շարք մը ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, որ ոգելից ըմպելիին, յատկապէս գինիին քիչ օգտագործումը օգտակար կրնայ ըլլալ առողջութեան համար:

Իտալացի կենսաբաններու եւ բժիշկներու տուեալներով՝ կարմիր եւ սպիտակ գինին օգտակար են սրտին:

Բժիշկներուն մեծ մասը համակարծիք են այն բանին շուրջ, որ գինիի օրական որոշակի չափաբաժինը բարենպաստ ազդեցութիւն կ'ունենայ մարդու առողջութեան վրայ, սակայն չափազանց օգտագործումը կրնայ վտանգաւոր դառնալ: Յարկ է յիշել, որ կիններու եւ 65 տարեկանէն վեր տղամարդոց համար օրական չափաբաժինը կը կազմէ մէկ գաւաթ (150 կրամ), իսկ այլ տարիքի տղամարդոց համար՝ երկու գաւաթ:





Ռաֆֆի Սիլահեան

ՓԱՐԻՉ 2024

ՄԱՐՄՆԱՄԱՐՉԻԿ ԱՐԹՈՒՐ ԴԱԻԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՒ ԱՐԾԱԹ ՄԵՏԱԼԻ

Մարմնամարզիկ Արթուր Դալիթեան նուաճեց արծաթե մետալ, Փարիզի մէջ ընթացող ամառնային 33-րդ Ողիմպիական խաղերուն: Թոքիոյի Ողիմպիական խաղերու պրոնզե մետալակիր, աշխարհի ախոյեան, Եւրոպայի կրկնակի ախոյեան Արթուր Դալիթեան յենացատկի վարժութեան եզրափակիչին երկու ցատկերու հանրագումարին վաստակեց 14.966 կետ եւ իր մարզական կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով դարձաւ Ողիմպիական խաղերու փոխախոյեան:



Յենացատկի վարժութեան որակաւորման փուլին Դալիթեան 14.666 կետ հաւաքելով գրաւեց 7-րդ տեղը:

Այս Յայաստանի առաջին մետալն էր Փարիզի Ողիմպիական խաղերուն:

ՄԱՐՄՆԱՄԱՐՉԻԿ ՎԱՅԱԳԸ ԴԱԻԹԵԱՆ ԳՐԱՒԵՑ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ 6-ՐԴ ԴԻՐՔԸ

Յայաստանի Ողիմպիական հաւաքականի անդամ, 35-ամեայ Վահագն Դալիթեան գրաւեց Փարիզի մէջ տեղի ունեցած 33-րդ ամառնային Ողիմպիական խաղերու 6-րդ դիրքը: Յայ մարմնամարզիկը օղակներու վարժութեան եզրափակիչ հանդիպումին յաջող ելոյթ ունեցաւ եւ վաստակեց 14.866 կետ:



Ողիմպիական խաղերու ախոյեանի կոչումին արժանացաւ Չինաստանի ներկայացուցիչը:

Յիշեցնենք, որ Վահագն Դալիթեան առաջին անգամ իր մասնակցութիւնը կը բերէ Ողիմպիական խաղերուն:

ԲՈՆՑՔԱՄԱՐՉԻԿ ԴԱԻԹ ՉԱԼՈՅԵԱՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆՈՒԹԵԱՒ

Յայաստանի բռնցքամարտի հաւաքականի անդամ, գերծանրութիւն բարձրացնող Դալիթ Չալոյեան Փարիզի Ողիմպիական խաղերու քառորդ եզրափակիչին մրցակից ունեցաւ Եւրոպայի ախոյեան, Սպանիոյ ներկայացուցիչ Այուս Դաթֆա Դրիսին: Լարուած մենամարտին հայ բռնցքամարտիկը ցաւալի պարտութիւն կրեց եւ չկրցաւ տիրանալ պրոնզե մետալին: Մենամարտի առաջին փուլի ընթացքին Չալոյեան արժանացաւ նշանակալի առաւելութեան, բայց մրցավարները առաւելութիւնը շնորհեցին սպանացի բռնցքամարտիկին: Յիշեցնենք, որ մեկնարկային մենամարտին Չալոյեան ծանր պայքարին 3 - 2 արդիւնքով առաւելութեան հասաւ եւ պարտութեան մատնեց անգլիացի Թելիշուս Օրին: Դալիթ Չալոյեան առաջին անգամ իր մասնակցութիւնը կը բերէ Ողիմպիական խաղերուն:



ԽԱՉԲԱՌ (ՄԽ 500)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1					■							
2			■								■	
3						■						
4					■		■					
5		■							■			
6					■						■	
7				■								
8		■		■					■			
9			■									
10					■			■				
11							■					
12	■				■							

Հորիզոնական

- Պաշար: Ամմեռ:
- Տարածքի միաւոր: Կոթնելու տեղ:
- Հակառակ՝ նուազ: Չուկ որսալու ճանկ:
- Հինգած պանիրի մանր որդ: Հակառակ՝ շարունակ:
- Օգտաբեր: Ողնաշարը կազմող մանր ոսկորներէն ամեն մէկը:
- Ճոխ: Չայնանիշ: Շաղկապ:
- Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Պետք: Ֆրանսայի քաղաքներէն:
- Տառի մը անունը: Հակառակ՝ կրկին:
- Բայական լծորդութիւն: Ռամկօրէն՝ այո: Գազանի բոյն: Տարածքի միաւոր:
- Օճառ: Հակառակ՝ տառի մը հարեանները: Հակառակ՝ կլոր ձող:
- Ազգային-գրական պարբերաթերթ, որ լոյս սկսած է տեսնել 1941-ին Հալէպի մէջ, հիմնադիր-խմբագիր ունենալով Անդրանիկ Ծառուկեանը: Շաղկապ: Չայնաւոր տառեր:
- Տաշելով յղկելու գործիք: Պատնէշ:

Ուղղահայեաց

- ՀՄԸՄ-ի հիմնադրութեան յաջորդած 1919-ի, 1921-ի, 1922-ի մարզախաղերու անուանումը:
- 16 էջնոց ծաւալ ունեցող տպագրական գործ: Հակառակ՝ եփ: Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւններէն:
- Բանտարկեալի շղթայ: Հաստատական պատասխան:
- Հակառակ՝ «Տիրոջ մարդ» իմաստը ունեցող արական անուն: Իգական անուն:
- Անձնական դերանուն:
- Անձնական դերանուն: Ծաղիկի տեսակ: Կերպ:
- Տարի: «Սպանուած Աղանին» վեպին հեղինակը:
- Տարածքի միաւոր: Հակառակ՝ առարկայ: Գոյութիւն ունէր: Կրկին:
- Հակառակ՝ թաքուն պայթուցիկ: Հակառակ՝ խորք:
- Հաստատուն, կայուն:
- Եւրոպական երկիր մը:
- Դանիել Վարուժանի բանաստեղծութիւններու ժողովածուներէն (երկու բառ):

ԽԱՉԲԱՌ (ՄԽ 499)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	բ	ա	ն	ա	գ			հ	ա	ն	ճ	ա
2	ա	բ	ն	ն	ի			ն	բ	ա	յ	ո
3	գ	ա	բ	ի				բ	գ	ն		պ
4	ա				մ	ս	ո	ւ	բ			է
5	դ	ի	ց					ա	ւ	բ	ա	յ
6	ի	ն			ա	գ	բ			ս	ն	մ
7	բ	ն		ն	ն	դ	ի	չ				ա
8		ա	ն	ճ	բ	է	ւ		ա	պ	ա	
9		ն	բ	կ	ի	բ	ն	ա	յ	ի	բ	ի
10		ա	ա		ճ		բ	ա	ա			
11		ա	ն	լ	ի		դ	բ	ա	ն	դ	
12	լ	ա			լ	ո	ո	ի		կ		ա

ÈàóÌ àòò

°նԻ àòß³µÃÇ

12/8



23° 40°

°ն»նß³µÃÇ

13/8



23° 39°

âáñ»նß³µÃÇ

14/8



23° 38°

ԹՇԿ՝ Ե³µÃÇ

15/8



23° 38°

àõñµ³Ã

16/8



26° 36°

Բ³µ³Ã

17/8



23° 39°

ÎÇñ³ÎÇ

18/8



22° 39°

